«Քայլ առ քայլ բարեգործական հիմնադրամ»

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

Դաստիարակ ՝ Ռուզաննա Խաչատրյան

Նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ «Ծիծեռնակ Մ/Մ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

ԳԼՈՒԽ 1 5
Հայրենաճանաչողական դաստիարակում և ուսուցում 5
1.1 Հայրենաճանաչողության կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիաիակության ձևավորման գործընթացում 5
1.2 Հայրենաճանաչողության և հայրենասիրության ուսուցումը ն/դ տարիքի երեխաների շրջանում 7
ԳԼՈՒԽ 2 9
ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ԿԱՏԱՐԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԸՆԹԱՑՔԸ 9
2.1 Հետազոտության կազմակերպման ընթացքը 9
2.2 Փորձարարական աշխատանքի ընթացքը 10
Եզրակացություն 16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

Ներածություն

Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան :

Ռաֆֆի

Կա մի ուրիշ մարմին, որ ավելի ու ավելի պաշտելի է քան մեր սեփականը, այդ մարմինը ՀԱՅՐԵՆԻՔՆ է:

Մուրացան

Հայրենասիրություն սկսվում է հայրենաճանաչողությունից: Հայրենաճանաչողությամբ դաստիարակելը այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկն է: Հայ առաջադեմ հասարակական գործիչները նշում էին, որ մեր ազգին անհրաժեշտ է կրթություն, դաստիարակություն հայրենասիրություն: Մ.Թաղիադյանը հաճախ էր կրկնում, որ մանկան կրթելը նման է պարտեզ մշակելուն: Որքան խնամքով մշակես և ժամանակին ջրես ծառերը, այնքան պարտեզը սաղարթախիտ ու հարուստ կլինի դրա համար անհրաժեշտ է համագործակցել ծնողների հետ և խորհուրդ տալ, որ երեխաներին մոտ դեռ վաղ տարիքից ձևավորել հայրենիքի նկատմամբ սեր: Երեխան հենց վաղ տարիքից պետք է սիրի իր հայրենիքը, իր մայր լեզուն: Նշանավոր հրապարակախոս, անվանի գիտնական հասարակական գործիչ Ստեփանոս Նազարյանը ազգաշինության գործում բացառիկ տեղ է տալիս լուսավորությանը նշելով, որ դրանով է զարգանում ազգային կուլտուրան, ազգային լեզուն, իսկ լուսավորության հիմնական օջախը նա համարում էր նախադպրոցական հաստատությունը: Հայ նոր սերունդը իր կրթությունը պետք է ստանա մայրենի լեզվով և ազգային ոգով: Հայրենաճանաչողությամբ դաստիարակելը հայրենիքի հանդեպ սիրո դաստիարակությունն է և պատասխանատվությունն: Հարենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը: Դաստիարակի և ծնողի հիմնական խնդիրն է երեխայի մեջ սերմանել սեր հայրենի հողի նկատմամբ:

Հայրենիքը այն թանկարժեք տարածքն է, որի համար իրենց կյանքն են զոհել շատ հայորդիներ: Ուստի մենք պարտավոր ենք այն ամբողջությամբ պահպանել և փոխանցել հաջորդ սերունդներին: Մեր նպատակն է երեխաների մեջ սերմանել

ազգային արժեքներ, ձևավորել գիտակից և պատասխանատու անհատ, որպեսզ ի ճանաչեն և սիրեն իրենց հայրենիքը: Սիրո զգացողություն առաջացնել հայրենիքի հանդեպ:

Հետազոտության նպատակը՝ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ձևավորել, ուսուցանել սեր հայրենիքի, ազգային մշակույթի նկատմամբ: Ես կարծում եմ, որ մեր ազգի նկարագիրը պահելու համար յուրաքանչյուր հայ մանուկ պարտավոր է իմանալ իր հայրենիքի պատմություն: Հետազոտության ընթացքում նախադպրոցական տարիքի երեխաները կճանաչեն իրենց հայրենիքի խորհրդանիշները, նկար քարտերի միջոցով կծանոթանան ՀՀ և Կոտայքի մարզի տեսարժան վայրերի հետ, ինչպես նաև նախատեսվում է այցելություն Չարենցավան քաղաքի մի քանի տեսարժան վայրեր:

Հետազոտական աշխատանքի ընթացքը և բաժինները՝ Հետազոտական աշխատանքում ներկայացված է նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության և հայրենասիրության կարևորությունը, քանի որ նախադպրոցականների ներդաշնակ զարգացման գործում առանձնահատուկ կարևոր է դաստիարակել հայրենասեր սերունդ, որը կոչված է նպաստելուն, թե՛ հասարակության բարոյական մակարդակի բարձրացմանը, և թե՛ լիարժեք անձնավորության ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի բաժիններն են՝

- Հայրենաճանաչողության կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության ձևավորման գործընթացում
- Հայրենաճանաչողության և հայրենասիրության ուսուցումը ն/դ տարիքի երեխաների շրջանում
- Հետազոտական աշխատանք

ԳԼՈՒԽ 1

Հայրենաճանաչողական դաստիարակում և ուսուցում

1.1 Հայրենաճանաչողության կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիաիակության ձևավորման գործընթացում

Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը:
Պարույր Սևակ

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Հայրենաճանաչողական դաստիարակությունը իրականացվում է որոշակի միջոցներով, որոնցից են՝ երեխային շրջապատող միջավայրը, ինքնուրույն գործունեությունը, բնության հետ շփումը, ինչպես նաև գեղարվեստական գրականությունը: Հայրենաճանաչողության գործում շատ կարևոր է մանկական գեղարվեստական գրականության դերը: Երեխաների համար պետք է ընթերցել այնպիսի ստեղծագործություններ, որոնք սեր կհաղորդեն երեխային հայրենի հողի, երկրի, մարզի, քաղաքի պատմության, ընտանիք, մանկապարտեզի հանդեպ: Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողության և հայրենասիրության դաստիարակության դրսևորումները ունեն իրենց առանձնահատկությունները: Մարդու կյանքում նախադպրոցական տարիքն այն շրջանն է, երբ դրվում են բարոյական զգացմունքների, որակների, ազգային պատկանելության գիտակցության ձևավորման և գնահատման նախնական հիմքերը: Երեխան փորձում է մանկավարժի աջակցությամբ գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր վատ ու լավ արարքները: Այդ գնահատումների հիմքի վրա երեխայի մոտ ծագում են ապրումներ, որոնք հետագայում վերածվում են դրական կամ բացասական սովորությունների: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցական տարիքի երեխաների մեջ դաստիարակված հատկություններն ու բնավորության գծերը հետագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում: Դրա համար անհրաժեշտ է դեռ վաղ տարիքից մեծ ուշադրություն դարձնել նրա հայրենասիրական դաստիարակության վրա: Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ

հայրենասիրություն սերմանելու նպատակն է ձևավորել բարի գործեր և արարքներ: Երեխաների հայրենաճանաչողություն ասելով հասկանում ենք մեծահասակների և երեխաների փոխգործակցությունը համատեղ գործողության և հաղորդակցության մեջ: Այդ պատճառով շատ կարևոր է, որ երեխայի կողքին կանգնած մարդիկ նրա համար օրինակ լինեն, որին նա կցանկան ընդօրինակել: Երեխաների հայրենաճանաչողության և հայրենասիրության հանդեպ սերը սկսվում է ընտանիքի հանդեպ սիրուց: Ս.Արղությանը անհրաժեշտ է համարում կյանքի վաղ տարիքից սկսած երեխայի մեջ ձևավորել բարոյական որոշակի արժեքային համակարգ, որը տարիքի հետ ավելի կզարգանա: 19-րդ դարի 70-ական թվականներին աչքի ընկավ գրական հասարակական գործիչ, մանկավարժ Սեդրակ Մանդինյանը: Նա հայտարարում էր, որ յուրաքանչյուր ազգի զավակ պետք է կրթվի, դաստիարակվի նախ իր մայրենի լեզվով: Ամեն ազգ ունի իր ուրույն ներքին կերպարանքը, դարերի ընթացքում կազմակերպված կառուցվածքը, իր վարքն ու բարքն, ազգային սովորույթները, սակայն ամենաբնորոշիչը լեզուն է, որը ծագել ու զարգացել է տվյալ ազգի հետ: Հայրենաճանաչողության դաստիարակության նպատակն է կրթել հայրենասեր՝ ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին: Երեխաներին դաստիարակելը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր գործունեություն է և նրա նշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, այդ իսկ պատճառով նախադպրոցական հաստատությունն է համարվում լավագույն միջավայր երեխայի մեջ հայրենասիրություն դաստիարակելու համար: Այսպիսով, հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

1.2 Հայրենաճանաչողության և հայրենասիրության ուսուցումը ն/դ տարիքի երեխաների շրջանում

«Հայրենասիրություն» բառը, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ և զգացմունքներ: Այս ազդեցության արմատները գտնվում են ժողովրդի լեզվում, որ երեխան սովորում է երգերից, խաղերից տպավորություններով հայրենի բնության աշխատանքի, սովորույթների մասին, որում նա ապրում է: Նախադպրոցական տարիքում շատ կարևոր է խոսել հայրենիքի գաղափարի և հայրենասիրության մասին և պետք է գիտակցել, որ հայրենիքը աշխարհագիտական միջավայր չէ, այլ արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է: Յուրաքանչյուր հայի հիշեցնում է, որ հայրենասիրությունը առնչություն ունի ծնողասիրության և որդեսիրության հետ: Նախադպրոցականի մանկության շրջանը նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման և ուսուցման համար, քանի որ հենց այդ ժամանակ է ձևավորվում երեխայի անհատականության հոգևոր և բարոյական հիմքը, նրա զգացմունքերի մտածողության զարգացումը հասարակության մեջ: Բելինսկին ասել է. «Ինչքանով երեխան փոքր է, այնքանով անմիջական պետք է լինի նրա հայրենասիրական դաստիարակությունը, այսինքն՝ նրան պետք է ոչ թե սովորեցնել, այլ ընտելացնել լավ զգացմունքների, հակումների, սովորությունների»: «Հայրենասիրությունը», որը զուգորդված է այլ ժողովուրդների նկատմամբ հետաքրքրությամբ և սիրով, անփոխարինելի է մտքի և սրտի նորմալ զարգացման համար: Մարդկանց համար բնական է սիրել իրենց հողը, իրենց գյուղը, քաղաքը, իրենց երկիրը և ժողովրդին, ինչպես նաև իրենց հարևաններին և այլ ազգերին, ողջ աշխարհը: Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում հայրենասիրական դաստիարակության ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել երեխաների ուսուցման և դաստիարակության նոր մոտեցումների կիրառման միջոցով: Ուսուցումը պետք է լինի ուղղակի, զարգացնող, հարստացնի երեխայի գիտելիքները, ձևավորի ճանաչողական հետաքրքրություններն ու կարողությունները: Անհրաժեշտ է

հստակ պատկերացում, թե ինչպես ենք մենք ցանկանում նախադպրոցականների մեջ դաստիարակել հայրենասիրություն, սեր երկրի, քաղաքի, հարազատների, հարգանք մեծահասակների հանդեպ: Այդ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ է կատարելագործել բարոյական դաստիարակությունը, զարգացնել երեխայի անձնական մշակույթը, որպես հայրենիքի հանդեպ սիրո հիմք: Այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ խնդիրները.

- Սաների մեջ առաջացնել հետաքրքրություն իր քաղաքի, մարզի, երկրի պատմության վերաբերյալ, ձևավորել մարդասիրական վերաբերմունք շրջակա միջավայրի, բոլոր կենդանի էակների նկատմամբ,
- յուրաքանչյուր երեխայի մեջ արթնացնել հետաքրքրասիրություն, գեղեցիկը զգալու ունակություն, իր ընտանիքի, իր տան, իր սեփական ժողովրդի, նրա պատմության, սովորույթների և ավանդույթների հանդեպ ձևավորել սիրո, ջերմության և պատասխանատվության զգացում,
- օգնել ծնողներին պահպանել և զարգացնել երեխաների հետաքրքրասիրությունը ծնող-երեխա-պարտեզ համատեղ գործունեության ընթացքում: Նշված խնդիրների լուծման համար իրականացվել են մի շարք ճանաչողական պարապմունքներ և զրույցներ:

Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա կրթական գործընթացի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ:

ԳԼՈՒԽ 2

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ԿԱՏԱՐԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԸՆԹԱՑՔԸ

2.1 Հետազոտության կազմակերպման ընթացքը

Մեր կողմից կատարված հետազոտությունը իրականացվել է քաղաք Չարենցավանի «Ծիծեռնակ» մսուր մանկապարտեզի «Թիթեռնիկ» ավագ խմբում: Մեր կողմից կատարված հետազոտությունը իրականացվել է երեք փուլով, դրանք են՝

- Կողմնորոշման փուլ
- Հետազոտման փուլ
- Ամփոփման փուլ

Կողմնորոշման փուլ-Այս փուլում առաջադրվել, հետագայում նաև հստակեցվել և հաստատվել են հաետազոտական աշխատանքի ներածության բովանդակությունը, նպատակը, ընթացքը և բաժինները: Մինչ իրականացվող բուն հետազոտական աշխատանքիների անցկացնելը մեր կողմից իրականացվել է հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն (Մ.Սահակյան,2011), (Ս.Արղության,1905), (Ս.Մարության, Ա.Դալլաքյան, 2008), (Յու.Ա.Ամիրջանյան, Սահակյան Ա.Ս,2005):

Հետազոտման փուլ- Հետազոտական աշխատանքի ընթացքում կատարվել է հիմնախնդրի տեսական և գործնական հետազոտություն: Բուն հետազոտական աշխատանքի շրջանակներում նախադպրոցական տարիքի ավագ խմբի երեխաների մոտ հայրենաճանաչողության ձևավորման նպատակով իրականացրած հետազոտական աշխատանքն: Վերջինս իրականացվել է քաղաք Չարենցավանի «Ծիծեռնակ» մսուր մանկապարտեզի «Թիթեռնիկ» ավագ խմբի սաների շրջանում: Իրականացվել է զրույց ծնողների շրջանում: Հետազոտությունը իրականացվել է 2023 թվականի նոյեմբերի 13-ին և ավարտվել նոյեմբերի 26- ին:

Ամփոփիչ փուլ- Հետազոտության ամփոփիչ փուլում արվել են հետևություններ, կազմվել և իրականացվել հետազոտական աշխատանքի եզրակացություն: Հետազոտության ընթացքում մեր կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքները՝

1.Հետազոտությունը իրականցվել է ավագ խմբում

2.Զրույց նույն պարտեզի դաստիարակների և մեթոդիստի հետ

3.Խորհրդատվական աշխատանքներ ծնողների հետ:

Այսպիսով,մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքների վերլուծությունից պարզ դարձավ, որ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում կարևոր դերակատարություն է տվում հայրենաճանաչողության ձվավորմանը,քանի որ կարևոր է դաստիարակել հայրենասեր սերունդ հենց վաղ տարիքից: Այս բոլոր աշխատանքները իրականացվել են նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում հայրենիքի նկատմամբ սեր սերմանելու նպատակով:

2.2 Փորձարարական աշխատանքի ընթացքը

Մեր կողմից իրականացրած հետազոտական աշխատանքի ընթացքում բացահայտել ենք,որ նախադպրոցական հաստատությունների միակ խնդիրն է առաջին հերթին երեխաների մեջ սերմանել ազգային արժանապատվություն, ազգային պատմական մշակույթի վերագնահատելու և արժևորելու կարողություն: Դա մեծ չափով կնպաստի ազգապահպանմանը: Ազգային դաստիարակությունը բարոյական դաստիարակության անբաժանելի մասն է: Ազգային դաստիարակության հիմքում ընկած են համամարդկային արժեքներ, սկզբունքներ: Հետազոտության ընթացքում իրականացրել ենք «Թիթեռնիկ» ավագ խմբի երեխաների ազգային մտածելակերպի ձևավորմանը նպաստող թեմատիկ զրույցներ, էքսկուրսիաներ, պարապմունքներ, խաղեր, ազգային ծեսերն ու տոնակատարությունները ներկայացնող բաց պարապմունք: Հետզոտության ընթացքում առաջարկվող հիմնական թեմաներին են,որոնց վերաբերյալ իրականացվում են թեմատիկ զրույցներ.

- Իմ ազգությունը

Ես հայ եմ և ունեմ իմ ազգային առանձնահատկությունները, իմ լեզուն հայերենն է : Հայ ժողովուրդը դարեր շարունակ կռվել ու պայքարել է իր գոյության համար և գոյատևել է իր աշխատասիրության և ազգային բարի ավանդույթների պահպանման շնորհիվ: Հայ ժողովութրդը ավանդապահ է, ունի ազգային սովորույթներ, ավանդույթներ, ծեսեր, տոնակատարություններ, որոնք փոխանցվում են սերնդե-սերունդ:

- Իմ ընտանիքը

Բոլոր ազգերի մարդիկ ունեն իրենց ընտանիքները: Ընտանիքը մարդկանց մի խումբ է, ուր ապրում են միասին,կիսում հոգսեր,ուրախություն ու տխրություն, սիրում և հոգ տանում միմյանց մասին: Ընտանիքում ապրում են մայրիկը, հայրիկը, տատիկը, պապիկը, քույրիկը կամ եղբայրը: Նրանք օգնում են միմյանց տնային գործերում: Երբ ընտանիքի անդամներից որևէ մեկը հիվանդանում է բոլորը սիրով խնամում են նրան

- Իմ հայրենիքը

Իմ հայրենիքըհայաստանի հանրապետությունն է: Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է, ամենամեծ լիճը՝ Սևանը, այնտեղ բազմանում են իշխան, սիգ, կողակ ձկնատեսակները: Հայաստանի գետերն են ՝ Արքասը, Արփան, Հրազդանը, Որոտանը և այլն: Հայաստանի լեռներից են՝ Գեղաման,Վարդենիսը, Զանգեզուրը: Հայաստանի միակ հարթավայրը Արարատյան դաշտավայրն է: Մեր հայրենիքը ստեղծվել է դեռևս այն ժամանակներից,երբ մեր պապերը հասել են Արարատ լեռան լանջերը,բնակվել են ու բազմացել: Հայաստանի Հանրապետությունը ունի 3 խորհրդանիշ՝ դրոշ, զինանշան, օրհներգ:

- *Դրոշ*

Դրոշն ունի 3 գույն՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն: Կարմիը նշանակում է ազատություն, կապույտը՝ խաղաղություն, ծիրանագույնը արև և աշխատանք: Դրոշի գույների մասին կան տարբեր մեկնաբանություններ: 2006 թվականին օրենքում գրված է.

Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը,հայ ժողովրդի մշտական պայքարը հավատքի,ահայաստանի անկախության և ազատության համար: Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների հետ թեմատիկ զրույցների ժամանակ նախապատվություն է տրվում առավել պարզ և հակիրճ բնութագրման:

- *Զինանշան*

Զինանշանում պատկերված է արծիվ և առյուծ՝ 2 հզոր ուժեր: Վահանի կենտրոնում Արարատ լեռն է, գագաթին՝ Նոյի տապանը: Շուրջը նկարված են հայ նախնիների, հայոց հզոր արքաների խորհրդանիշներից: Զինանաշանի ներքևում պատկերված է շղթա,որը խորհրդանշում է հայ ժողովրդի կապանքները, իսկ փետուրներով գրչածայրը խորհրդանշում է հայ ժողովրդի ձգտումը դեպի գիրն ու գրականություն:

- *Օրհներգ*

Հայաստանի Հանրապետության օրհներգը «Մեր հայրենիք» երգն է: Օրհներգը լսելիս կամ երգելիս ոտքի են կանգնում և աջ ձեռքը սեղմում սրտին: Դա նշանակում է, որ սիրում և հպարտանում ես քո հայրենիքով: Երեքը միասին խորհրդանշում են հզոր պետություն, հզոր բանակ և հզոր ժողովրդի միասնություն:

Իրականացրել եմ անհատական խորհրդատվական աշխատանք յուրաքանչյուր ծնողի հետ,ընտանիքում հայրենասիրության մասին զրուցելու և նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում սեր սերմանելու հայրենիքի նկատմաբ:

Հետազոտության ընոացքում իրականացրել եմ նաև բաց պարապմունք «Իմ Հայրենիք» թեմայով, ավագ խմբի երեխաների կետ: Ստորև ներկայացնում եմ բաց պարապմունքի թեմատիկ պլանը.

Այսպիսով, նախադպրոցականների ներդաշնակ զարգացման գործում առանձնահատուկ կարևոր է ազգային մշակույթի առանձնահատկությունները հայրենաճանաչողության գործում, որը կոչված է նպաստելու, թե՛ հասարակության բարոյական մակարդակի բարձրացմանը, և թե՛ լիարժեք հայրենասեր անձնավորության ձևավորմանը:

Պարապմունքի պլանավորում

Թեմա-<<**Իմ Հայրենիքը**>>

Նպատակ . Երեխաներին ծանոթացնել Հայաստանի հանրապետության տեսարժան վայրերի, քաղաքամայր Երևանի և մարզերի հետ:

- Ծանոթացնել մեր երկրի պետական խորհրդանշաններին :
- Զարգացնել կապակցված խոսքը:

Մեթոդ. Պրապմունքի սկզբում հնչում է ՀՀ օրհներգը:

<< Սառույց կոտրող >>աշխուժացնող վարժություն

Երեխաները կանգում են իրենց սեղանների մոտ, դաստիարակը հրահանգ է տալիս նստում է այն երեխան ում սեղանին դրված է կարմիր գույնը ,ապա կապույտ գույնը, և վերջում նարնջագույնը**:** Իրար կողք կողքի նստած երեխաները հավաքում են իրար դիմաց դրված գունավոր թղթերով ՀՀ դրոշը:

Իմաստի ընկալում . Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի, մարզերի մասին :

Դաստիարակ - Երեխաներ, ո՞րն է մեր հայրենիքը

Խումբ - Հայաստանը

Դաստիարակ Հայաստանը ի՞նչով է հարուստ

Խումբ - Տեսարժան վայրերով ,եկեղեցիներով, սարերով ,լեռներով.

Դաստիարակ- Ո՞ր մարզում եք ապրում

Խումբ- Կոտայքի մարզում

Դաստիարակ - Ո՞ր քաղաքում եք ապրում

Խումբ - ք. Չարենցավնում

Դաստիարակ- Այսօր կխոսենք մեր հայրենիքի մասին, կծանոթանանք մեր մայրաքաղաքի , քաղաքների մարզերի հետ:Կիմանանք , թե , որ մարզում ենք մենք բնակվում: Յուրաքանչյուր երկրներում կան մեծ ու փոքր քաղաքներ, սակայն այդ քաղաքներից մեկը մեր քաղաքամայր Երևանն է:Այն հարուստ է տեսարժան վայրերով: Իսկ այն մարզը, որտեղ մենք ապրում ենք՝ կոչվում է Կոտայքի մարզ: Խոսում է և նկարի միջոցով ցույց է տալիս ՀՀ տեսարժան վայրերը, ՀՀ պետական խորհրդանշանները և փակցնում ցուցադրվող պատին: Դաստիարակը մեկնաբանում է դրոշի գույները և լսվում է օրհներգը :

Նյութեր- Նախօրոք սեղաններին պետք է դրված լինի A4 թղթեր , գունավոր մատիտներ:Երեխաները նստում են սեղանի շուրջ և նկարում են ՀՀ դրոշը: Աշխատանքը ավարտելուց հետո դաստիարակը շրջում է խմբասենյակում և հրահանգ է տալիս,որ երկու երեխա ներկայացնեն իրենց աշխատանքը իսկ մյուս երեխաների աշխատանքները փակցնում ենք ցուցադրման պատին :

Կշռադատման փուլ.

Դաստիարակ -Երեխաներ ձեզ դուր եկա՞վ այսօրվա մեր զրույցը :

Ի՞նչ նոր բան իմացանք :

Խումբ - Ծանոթացանք մարզերի ,ՀՀ որոշ տեսարժան վայրերի հետ:

Օրվա II կես Երեխաներին տրամադրել ուրվագծված տեսարժան վայրեր և առաջարկել գունավորել:

Պարապմունքի վերջում բոլորին խրախուսել ժպիտիկներով :

Դաստիարակ, ծնող, երեխա կապը

Ծնողներին առաջարկել կազմել գիրք <<Իմ հայրենիքը >> թեմայով

Վերջնարդյունք

Կհորինենք նկարի շուրջ նոր պատմություն հայրենիքի մասին

Կայցելենք պատմամշակույթային կենտրոն

Պատկերել առարկաները բնօրինակից և պատկերացմամբ օգտագործելով գունավոր մատիտներ:

Մեթոդական դիտարկում

Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է տարիքային չափանիշին: Ընտրված անհրաժեշտ պարագաները, նկարները նույնպես համապատասխանեցված են պարապմունքին: Պարապմունքի տեսակը՝ զրույց: Դաստիարակի խոսքը հստակ է, մատչելի, գրական, ձայնային տեմբրը մեղմ: Պարապմունքը տարվել է ԽԻԿ համակարգով, պահպանվել է տևողությունը:Կիրառվել է մեթոդներ, հնարներ, հարցադրում, վերապատմում, խաղային մեթոդներ, ոտանավորի ուսուցում, նկարների միջոցով պատմում: Դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակին՝ ըստ որի անհրաժեշտ է երեխաներին տալ գիտելիքներ հայրենիքի մասին, դաստիարակել հպարտության զգացում, զարգացնել ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը, երեխաներին խանոթացնել ՀՀ քարտեզին, դրոշին և զինանշանին:

Եվ, որ ամենակարևորն էր՝ պարապմունքի ավարտին երեխաները կարողացան պարապմունքի ընթացքում ստացած գիտելիքների շնորհիվ հյուսել կապակցված խոսք՝ փոքրիկ պատմություններ ներկայացնելով: Պարապմունքի ընթացքում երեխաները ունկնդրեցին հայրենասիրական բանաստեղծություն, երաժշտություն, երգեր և կիրառվեց ֆիզկուլտ դադար: Երեխաները ոգևորված էին, շատ ակտիվ,

հայրենասիրական ոգով տրամադրությամբ, ընդգրկված էին բոլոր երեխաները, կատարվեց նաև ենթախմբային աշխատանքներ:

Որպես առաջարկություն կառաջարկեի պարապմունքի ավարտից հետո զբոսանք կազմակերպել և այցելել քաղաքի մոտակա զբոսայգի՝ Եղիշե Չարենցի թագարանին ծանոթանալու նպատակով:

Եզրակացություն

Այսպիսով, մեր կողմից անցկացված հետազոտությունը հնարավորություն տվեց կատարել հետևյալ եզրհանգումները՝ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ձևավորեց «հայրենիք» գաղափարը և ազգային ինքնության տարրերը՝ խորհրդանիշները: Երախաները մեջ սերմանվեց, որ «հայրենիքը» սկսվում է իր տնից և տարածվում ամբողջ երկրով մեկ: Հայրենաճանաչողության դաստիարակության մեջ հաջողության կարելի է հասնել, եթե ընտանիքներում նույնպես իրականացվի համապատասխան դաստիրակություն, որով երեխաներին կպատմեն իրենց երկրի, քաղաքի կամ գյուղի պատմության մասին: Այսպիսով, մեր կողմից իրականացրած հետազոտական աշխատանքներից պարզ դարձավ, որ հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ:

Նախադպրոցականներին միջավայրին ծանոթացնելու գործընթացում ընտանիքը ներգրավելու անհրաժեշտությունը բացատրվում է հատուկ մանկավարժական կարողություններով, որոնք ունի ընտանիքը: Նրանց սոցիալական կողմնորոշումը բարենպաստ պայմաններ է ստեղծում ավելի բարձր բարոյական զգացմունքների դաստիարակության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005,[54-58]:

2. Սուխոմլինսկի Վ.Ա., Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980,[46-48]:

3.Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ, Երևան 2009,[47-55]:

4.Թադևոսյան Ժ.Ա., Կրթադաստիարակչական համակարգի կառավարման տեխնոլոգիաները դպրոցում, Երևան 2008,[33-36]:

5.Սահակյան Մ.,Նախադպրոցական իազգային դաստիարակության հիմնահարցերը Սոֆիյա Արղությանի մանկավարժական հայացքներում,Երևան 2011